



# Հուշ-երեկո՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի տարիների երեխաներին

**ՖՈՏՈՕԲՅԵԿՏԻՎԸ ՊԱՏԿԵՐՈՒՄ Է ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ**

*Չալթրի "Հրազդան" կինոհամերգային դահլիճում անցկացվեց Հայրենական մեծ պատերազմի տարիների երեխաներին նվիրված հուշ-երեկո: Միջոցառումը հետաքրքրել էր շատերին, և նրանք եկել էին ներկա գտնվելու: Դահլիճում նստած էին ոչ միայն տարեց մարդիկ, այլև կային տարբեր տարիքի բազմաթիվ դպրոցականներ: Ներկա էին շրջանի գլխավոր Արշակ Մարգարի Փորքշեյանը, դեպուտատների շրջանային Ժողովի նախագահ Ծերոն Կարապետի Քեչեջիյանը, "Պատերազմի երեխաները" հասարակական կազմակերպության շրջանային բաժանմունքի նախագահ Լուսեղեն Նահապետի Չուբարյանը, հիմնարկությունների, ձեռնարկությունների ղեկավարներ, մշակույթի և այլ բնագավառների աշխատողներ:*

*Երեկոն մեծ ցանկությամբ վարեց հանգամանորեն պատրաստված սցենարի և նկարահանության հեղինակ Քնարիկ Սմոլյանիչենկոն:*





Ահա սկսվում է հուշ-երեկոն: Ներկայացվում է պատերազմի օրերի մի պատկեր: Բեմի մի անկյունում դրված է նստարան, նստած են աշակերտուհին և աշակերտը: Աղջիկը վեր է կենում, կրծքին է սեղմում եռանկյունի նամակը. "Ահա, մահվան գիր է եկել: Բայց ես հավատում եմ, որ հայրիկս չի մահացել": Դիմում է դահլիճում նստողներին. "Գուցե ձեզանից մեկը ինչ-որ տեղ հանդիպել է հայրիկիս":

Պաղ հատակին...
Որը լաթի տակ,
Որն էլ հենց այնպես,
Հինգ քաղցած որբեր
Նայում են օջախին:
"Մի լաք դուք,- տխուր
ասում է մայրը,-
Կուտեցնեմ ձեզ ես,
Քուն կանեմ հետո":
Կերակրում է
ու պառկեցնում
ծղոտի վրա
իր փոքրիկներին:

Էկրանի վրա պատերազմի տարիների երեխաներ են ցուցադրվում:

Հաղորդավարը ողջունում է դահլիճում գտնվողներին.

- Բարև ձեզ, թանկագին հայրենակիցներ, այսօր մենք երախտապարտորեն կհիշենք նրանց, ում մանկությունն ու պատանեկությունը հրկիզված են մարդկության պատմության մեջ ամենաասարսափելի պատերազմի բոցերով:

Ընթերցվում են Եղիսաբեթ Չուվարայանի ոտանավորի տողերը՝ նվիրված պատերազմի տարիների երեխաներին: Ցուցադրվում է ֆիլմ պոհվածների մասին: Արտասանվում են բանաստեղծություններ

Շողակաթ Տպխյանը երգում է "Անբախտ աղջիկ" երգը: Նվագակցում են Միքայել Վարդկինայանը, Օսկան Թուխիկյանը, Խաչիկ Վարդկինայանը և Անդրանիկ Խարտավագյանը: Ապա Ելույթներ են ունենում մանկական խմբերը:



Յոթ ամիս մեր մարզը և շրջանը գտնվել են օկուպացիայի մեջ: Ինչ դաժանություններ ասես, որ չեն տեսել քաղցած ու կիսամերկ մարդիկ:

Հաղթանակը մոտեցնելու ձգտումով պատանիները մեծահասակների հետ հավասար մեր կորքերի համար փորել են խրամատներ, ուրիշ ծանր գործեր կատարել:

Մարզը ազատագրվելուց անմիջապես հետո 1927-1928 թվականների ծնունդ 16-17 տարեկան պատանիներին հավաքագրել են գործարաններում և անտառամթերքերում աշխատելու համար: Նրանց թվում են եղել Մարգար Խաթլամաջյանը, Վարդերես Էկիզյանը, Կարապետ Քեչեջիյանը,



որոնց էր միացել նաև 15-ամյա Մանուկ Փեհլիվանյանը: Երեք տարի ծառայելուց հետո նա վերադարձել է Չալթր և մինչև թոշակի անցնելը աշխատել վարսավիր: Այսօր նա դահլիճում է:

Ավետիք Հայլամազյանի ղեկավարությամբ նվագում է փողային գործիքների նվագախումբը: Եվ հաղորդավարը Մանուկ Փեհլիվանյանին հրավիրում է վալս պարելու:

*Լուսանկարները՝*
*Ա. ՄԻՐՈՒՔՅԱՆԻ*